

# Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

**1885 փետրվար** 2 Ծնվեց գրող, հրատարակիչ, փիլիսոփա Կոստան Զարյանը: (Վախճ. 1969թ.-ին):

**փետրվար** 2 Ախալքալաքի գավառի Գանձա գյուղում ծնվեց հայ նշանավոր բանաստեղծ, գրական, հասարակական գործիչ Վահան Տերյանը: (Վախճ.):

**փետրվար** 13 Ցարի հրամանով փակվեցին Կովկասի հայկական Եկեղեցական ծխական դպրոցները:

**փետրվար** 15 Ծնվեց հայ բանաստեղծ, արձակագիր և թժշկ Ռուբեն Սևակը: (Վախճ. 1915թ.-ին):

**հուլիս** 20 Ֆրանսիայի Մարսել քաղաքում Ս. Փորբուգայանի խմբագրությամբ հրատարակվում է «Արմենի» թերթը (Մինչև 1923թ.):

**հուլիս** 28 Ծնվեց հայ ականավոր թերապևտ Արտաշես Մելիք-Աղամյանը: (Վախճ. 1949թ.):

**դեկտեմբեր** 20 Ծնվեց հայ ականավոր հեղափոխական և պետական գործիչ Ալբանա Մովսյանը: (Վախճ. 1929թ.-ին):

**1886 հունվար** 18 Կ. Պոլսում ծնվեց նշանավոր դերասան Վահրամ Փափազյանը: (Վախճ. 1966թ.-ին):

**հունվար** 28 Նոր Խախիջևանում ծնվեց Կոնունիստական Կուսակցության և Խորհրդային Պետության ականավոր գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը: (Վախճ. 1925թ.-ին):

**մայիս** 18 Ցարական հրամանագրի համաձայն Անդրկովկասուն 1887թ. հունիսի 2-ից նոցվեց պարտադիր գինվորագրություն:

**հուլիս** 11 Ծնվեց հայ բանաստեղծ Միսաք Մեծարենցը: (Վախճ. 1908թ.-ին):

**սեպտեմբեր** 1 Կ. Պոլսի Ղալաթիա քաղամասում Մինաս Չերազի տեսչությամբ բացվեց Կենտրոնական Վարժարանը:

**հոկտեմբեր** 16 Ծնվեց մեծ նարդասեր Արմին Վեգմերը: Որպես գերմանացի գինվոր Մերձավոր Արևելքում՝ նա գաղտնի կերպով լուսանկարել է 1915 թ. Թուրքիայի կողմից իրականացվող հայկական ցեղասպանության վայրագ տեսարաններ: Արմին Վեգմերը ապարդյուն փորձում էր կառավարությանը զգուշացնել հնարավոր հետագա ցեղասպանությունների մասին: (Վախճ. 1978թ.-ին):

**1887 հունվար** 1 Վիեննայի Միհրարյան միաբանությունը հրատարակեց «Հանդես ամսօրեա» ամսագրի առաջին համարը:

**մարտ** 20 Քուրայիսում ծնվեց Խորհրդային ականավոր գիտնական Հովսեփ Օրբելին: (Վախճ. 1961թ.-ին):

**հունիս** 17 Շուշիում ծնվեց նշանավոր կուսակցական հասարակական-քաղաքական գործիչ, ականավոր պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը: (Վախճ. 1972թ.-ին):

**օգոստոս** 14 Վախճանվեց հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Օսյանը: (Ծնվ. 1834թ.-ին):

**հոկտեմբեր** 3 Վախճանվեց գրական-

հասարակական գործիչ Սերվիչեն Սերովիք Վիչենյանը: (Ծնվ. 1815թ.-ին):

**1888 փետրվար** 17 Թիֆլիսում մահացավ հայ նշանավոր պատմափիպասան Ծերենցը՝ Հովսեփ Շիշմանյան: (Ծնվ. 1882թ.-ին, Կ. Պոլսում):

**մարտ** 21 Մոնկվայում ծնվեց Խորհրդային անվանի գրող Սարիենտա Շահինյանը:

**ապրիլ** 18 Ծնվեց դաշնակցական գինվորական գործիչ Գարեգին Նժդեհը: (Վախճ. 1955թ.):

**ապրիլ** 25 Թիֆլիսում վախճանվեց հայ գրականության դասական Րաֆֆին (Շակոր Մելիք-Շակորյանը): (Ծնվ. 1835թ.-ին Սալմաստի գավառի Փայաջուկ գյուղում):

**հոկտեմբեր** 24 Ծնվեց գրող-երգիչաբան Լեռ Կամսարը (Արամ Թովմանյանը): (Վախճ. 1965թ.-ին):

**1889 փետրվար** 19 Էջմիածնում մահացավ հայագետ Ստեփանոս Պալասանյանը: (Ծնվ. 1837թ.-ին):

**ապրիլ** 2 Պետերբուրգում մահացավ ականավոր հայագետ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆեսոր Թերովի Պատկանյանը: (Ծնվ. 1833թ.-ին):

**ապրիլ** 13 Պետերբուրգում վախճանվեց պատմաբան, հրապարակախոս և բանաստեղծ Գարբիել Պատկանյանը: (Ծնվ. 1802թ.-ին):

**մայիս** 13 Վաճի նահանգի Չուխ գյուղի մոտ զիվեցին հայ ազատագրական շարժման առաջին մարտիկներից Վարդան Գոլոշյանը ու Հովհաննես Ազրիպասյանը:

**հունիս** 15 Ծնվեց նկարիչ և ճարտարապետ Երվանդ Բոչարը: (Վախճ. 1979թ.-ին):

**հունիս** 29 Ծնվեց գրող, արձակագիր, կինոդրամատուրգ Աքսել Բակունցը: (Վախճ. 1937թ.-ին):

**սեպտեմբեր** 15 Թիֆլիսում բացվեց գյուղատնեսական և արդյունաբերական արտադրանքների Կովկասյան ցուցահանդեսը:

**նոյեմբեր** 15 Լոնդոնում ֆրանսերեն լեզվով լուս տեսավ «L'Arménie» (Դայաստան) քաղաքական և գրական ամսաթերթը Մինաս Չերազի խմբագրությանը:

**1890 հունվար** 1 Թիֆլիսում լուս տեսավ «Տարագ» շաբաթաթերթը (ապա ամսագիր) Տիգրան Նազարյանի խմբագրությամբ:

**հունիս** 18 Ընդիարում կառավարական գործերի և Կարինի անգեն հայ բնակչության միջև:

**հուլիս** 19 Կ. Պոլսում հնչայյանները կազմակերպեցին Գում-Գափուի ցույցը:

**1890 օգոստոս** 25 Թիֆլիսում կազմակերպվեց «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը, որը հետագայում կոչվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն»:

**սեպտեմբեր** 4 Մեծ Ղարաքիլիսայում (Կիրովական) ծնվեց հայ անվանի գրող Ստեփան Զորյանը: (Վախճ. 1967թ.-ին):

**սեպտեմբեր** 10 Պրագայում ծնվեց ավստրիացի վիպասան Ֆրանց Վերֆելը: 1933 թ.-ին նա գրել է «Մուսա լեռան քառասուն օրը» դյուցազնական պատմությունը՝ թուրքերի կողմից հայերի ցեղասպանության մասին: (Վախճ. 1945թ.-ին):

**սեպտեմբեր** 24 Սարգս Կուկունյանի խումբը անցավ թուրքական սահմանը:

**հեկտեմբեր** 13 Մոնկվայում վախճանվեց հայագետ Սկրտիչ Եմինը: (Ծնվ. 1815թ.-ին):

(Հարուսակելի)

# ԵՆԻՔԻ

## Իրանահայ համայն

ԹԵՇՐԱՍԻ «ՍՈՒՔԵՐՅԱՆ» ՍՐԱՅՈՒՄ  
ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ԺՈՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ  
«ԲՈՒՄԵՐԱՆԳ» ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅԱՆ  
ԲԵՍԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Թեհրանի Հայ մշակութային «Նախի» միության կենտրոնատեղի ԱՄՆ-ի բոլոր փորձերը կիանգեցնեն միայն ամբողջ տարածաշրջանի ապակյունացմանը: Ըստ նրա, Միացյալ Նահանգները մերձավորելելու գործերին մասնակցում են «տարածաշրջանում ժողովրդավարության պաշտպանության պատրվակով»: Սակայն, ընդգծել է նախարարը, «նրա իսկական նպատակը տարածաշրջանի երկրների ապակյունացումն է»: Նշենք, որ Քանալ Խարազին Դնդկաստանում է գտնվում եռօրյա այցով:

Յուշերեկոյ՝ նւիրած Ռ. Բէնի յիշատակին

Հայ ճարտարապետների ու ճարտարագէտների, Հայ հանալսարանականների ընդհանուր եւ Իրանահայ գրողների միութիւնների նախաձեռնութեամբ երեկ երեկոյեան Հայ ակումբի սրահում տեղի ունեցաւ յուշերեկոյ՝ նիւրած իրանահայ ճարտարապետ, արձակագիր եւ մտաւորական Ռուբեն Յովհաննիստեանի (Ռ. Բէն) յիշատակին, որին ներկայ էր զգալի թուվ գրասեր հասարակութիւն:

Նախ Հայ ճարտարապետների ու ճարտարագէտների միութեան նախագահ Էդվարդ Յարութիւնեանը բացման խօսքում ներկայացրեց Ռ. Բէնի կենսագրականը եւ հասարակական գործունեութիւնը, ապա իրանահայ բանաստեղծ Վարանը հանգանանորտն անդրադարձաւ Ռ. Բէնի գրական գործունեութեանը՝ պատմելով յուշեր նրա հետ ունեցած հանդիպումներից: Գեղարվեստական բաժնում դաշնամուրային ելոյթներով հանդէս եկան Լորետա Ղանիէեանը եւ Թալին Գիրշեանը՝ կատարելով Շոպէնի երկու նոկտիւններ, իսկ Շաք Պետրոսեանը եւ Դին Գալստեանը ընթերցեցին Ռ. Բէնի գրչին պատկանող գրաձեռներ: Չեռնարկի ընթացքում ցուցադրուեցին Երեւանում Ռ. Բէնի հետ կայացած հարցազրոյցից հատւածներ: Յուշերեկոյին ներկայ էր նաև Հայաստանի «Նոր դար» գրական պարբերականի խմբագիր Արգար Ավինեանը, որը դրաւական արտայայտութիւններ ունեցաւ Ռ. Բէնի Հայաստանում կատարած օժանդակութիւնների ու ներդրումների մասին:

## Իրան

Քանալ Խարազի. Իրանը կարող է իրեն պաշտպանել ԱՄՆ-ի ցանկացած հարձակումից: Այդ մասին այսօր Նյու Յելիում հայտարարել է Իրանի արտաքին գործերի նախարար Քանալ Խարազին: «Մենք միանգանայն ընդունակ ենք պաշտպանվել: ԱՄՆ-ը գիտե, որ Իրանը Իրաք չէ», -ընդգծել է Խարազին:

Նախարարը նշել է, որ Մերձավոր արեւելքում սփական օրինակով ժողովրդավարություն հաստատելու ԱՄՆ-ի բոլոր փորձերը կիանգեցնեն միայն ամբողջ տարածաշրջանի ապակյունացմանը: Ըստ նրա, Միացյալ Նահանգները մերձավորելելու գործերին մասնակցում են «տարածաշրջանում ժողովրդավարության պաշտպանության պատրվակով»: Սակայն, ընդգծել է նախարարը, «նրա իսկական նպատակը տարածաշրջանի երկրների ապակյունացումն է»: Նշենք, որ Քանալ Խարազին Դնդկաստանում է գտնվում եռօրյա այցով:

**Սոհամադ Խաթամի.  
Էներգակիրները տարածաշրջանի  
ճգնաժամների իիմնական  
պատճառն են**

ԹԵՇՐԱՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանի նախագահ Սոհամադ Խաթամին Մերձավոր եւ Միջին արեւելքի էներգետիկական ռեսուրսները համարում են տարածաշրջանի ճգնաժամային իրավիճակների իիմնական պատճառը: «Իսլամական Յանրապետությունը պաշտպանում է տարածաշրջանի խաղաղ գործընթացները եւ այն կարծիքին է, որ տարածաշրջանում առկա ճգնաժամների պատճառները էներգառեսուրսներն են, դրանց օգտագործումն ու պահանջարկը», -ասել է Խաթամին Սիրիայի վարչապետ Նաջի Աբրիի հետ կայացած հանդիպմանը, որն այցով գտնվում է Իրանում:

Ինչպես հաղորդել է Իրանի նախագահի վարչակազմի մամուլի ծառայությունը, հանդիպման ընթացքում Խաթամին նշել է տարածաշրջանային ու միջազգային տարբեր իիմնախնդիրների նկատմամբ թեհրանի եւ Դամակոսի դիրքորոշումների մոտիկությունը, հայտարարելով, մասնավորապես, Լիբանանի դիմադրության շարժմանը Իրանի աջակցության մասին, շարժում, որը պայքար է մղում իսրայելական բռնազավթման դեմ:

Խաթամին եւ Աբրիի քննարկել են նաև քաղաքական, առեւտրատնտեսական եւ էներգետիկայի բնագավառներում իրանա-սիրիական համագործակցության անրապնդման հարցերը:

## Հայաստան

**Մինչ տարեվերջ հանրապետությունում  
կիմնվեն երիտասարդական վեց կենտրոններ**

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հանրապետության վեց մարզերում մինչ տարեվերջ կիմնվեն երիտասարդական

# Հոգևոր Արքայի առաջարկելութեան

Կենտրոններ, որոնք տեղի երիտասարդներին հնարավորություն կտան կազմակերպել իրենց ազատ ժամանակը եւ կծառայեն որպես սոցիալական կենտրոններ, ուր կտրամադրվեն երիտասարդության անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:

Ինչպես ԱՐՄԵԼՊՐԵՍԻ մամուլի սրահում այսօր իրավիրված ասուլիսի ժամանակ նշեց ՀՀ ճշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Լիլիթ Աստրյանը, այդ կենտրոնները կիմանվեն Շիրակում, Լոռիում, Սյունիքում (այս մարզերն ընտրվել են դեռ անցյալ տարի), եւ եւս երեք մարզում, որոնք կը նշեն ընտրվեն այս տարի: «Ընտրության հարցում մենք ելնում ենք այն սկզբունքից, թե որ մարզում է երիտասարդների թիվն առավել մեծ, որտեղ կան բուհեր, երիտասարդական հասարակական կազմակերպություններ, նաեւ, թե որ մարզերում են երիտասարդները հասել այն մակարդակին, որ օգտվեն այդ կառույցներից», - պարզաբանեց փոխնախարարը:

Ըստ նրա, կենտրոնների հիմնադրման հարցում պետությունը, որպես նախաձեռնող եւ պետական երիտասարդական քաղաքականության մաս, համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների եւ մարզպետարանների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների հետ. «Փաստորեն սա քառակողմ ծրագիր է, ինչը մեր կողմից այսօր խրախուսելի է, հատկապես պետություն եւ երիտասարդական հասարակական կազմակերպություն համագործակցությունը», - նշեց Լ.Ասատրյանը՝ հավաստելով, որ ներկայում այդ համագործակցությունը շատ արդյունավետ է ընթանում հատկապես սահմանամերձ Կորի գյուղում. «Այստեղ երիտասարդությունը նույնիսկ տեղական թերթ ունի, ակտիվությունը մարզում է մարզում եւ երկրում տեղի ունեցող միջոցառումների, մինչեւ անգամ համայնքային տարբեր ծրագրերի»:

## ՎԵՐԱ ՓԻՂԸ ԿԳԱ ԳԱՐՆԱԾԸ

Այս հիմնական տեսակետն էին հայտնում երեկ կենդանաբանական այգում իրավիրված ասուլիսի ժամանակ թե՛ նշյալ այգու տնօրենությունը, թե՛ ներկա հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները եւ թե՛ Յայաստանում Յնդկաստանի հյուպատոսը: «Մեր պայմանավորվածության համաձայն, Վեդային պետք է Յայաստան թերենք ապրիլին: Կարող ենք հիմա ել թերել, բայց որոշեցինք գարնանը թերել՝ ցրտերն անցնելուց հետո», պատմում է կենդանաբանական այգու տնօրեն Սահակ Աբովյանը: Նրա խոսքերով, «Գրանդ հոլդինգի» հոգածությամբ փող համար կառուցվել են ձմեռանոց եւ ամառային կացարան: «Այդ բողոքի ցույցն ինչ-որ հասարակական կազմակերպություն է արել մի խունք երեխաների հետ, որի իրավասության մեջ չի մտնում փիղը տալ-չտալու հարցը: Յնդկաստանի կառավարությունը խոստացել է տալ, կտա, երկնքից էլ լինի, մեր փիղը հարսնացու կունենա», նշում է պրո Աբովյանը:

Ինչ վերաբերում է հնդկական DHL News գործակալության իրապարակած այն լուրերին, թե հնդկական կողմը երեւանի կենդանաբանական այգու

նախկին պետից՝ ինչ-որ կնոջից պարզել է, թե այգու պայմանները պատշաճ չեն փղերի համար, Սահակ Աբովյանը հերթեց: «Կենդանաբանական այգու կին տնօրենն աշխատել է 16 տարի առաջ եւ չէր կարող ննան բան ասել, դա չի համապատասխանում իրականությանը, եթե անգամ ասած լինի: 16 տարի հետո շատ բան է փղսվել, բացի այդ՝ որոշ հասարակական կազմակերպությունները իրենք են հաստատել, որ մեր կենդանաբանական այգու պայմանները նորմալ են»:

Իսկ, թե ինչ հասարակական կազմակերպություններ են կարծիք հայտնել կենդանաբանական այգու պայմանների մասին, ապա եղելությունը հետեւյալն է. հնդկական «Սուպարնա գանգուրլի» հասարակական կազմակերպությունը դիմել է «Եվրասիա» բարեգործական հասարակական կազմակերպությանը, «Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի» կովկասյան մասնաճյուղի գրասենյակին անկախ դիտորդական առաքելություն անցկացնելու խնդրանքով: «Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի» կովկասյան մասնաճյուղի գրասենյակի տնօրեն Կարեն Մանվելյանի խոսքերով՝ իրենք ասել են, որ պայմանները բավարար են փղին Յայաստան թերելու եւ անգամ ձմռանը պահելու համար: Դրանից հետո, պրո Մանվելյանի խոսքերով, հնդկական կողմը մերժելու մի շարք անհիմն փաստարկներ է թերել, ինչպիսին է, օրինակ, այն, որ փղերն ընտանիքով են ապրում եւ չի կարելի նրանց բաժանել: «Այս քայլը չի արտացոլում ո՞չ Յնդկաստանի կառավարության, ո՞չ էլ նրանց կենդանաբանական այգու դեկավարության կարծիքը, եւ ես հույս ունեմ, որ Յնդկաստանի կառավարությունը կկատարի իր խոստումը», կարծում է պրո Մանվելյանը:

Այս կարծիքին համաձայնեց նաեւ Յայաստանուն Յնդկաստանի հյուպատոս ԱՄինդո Բենարջին, որը փղին հատկացվելիք կացարանը նայելուց հետո նշեց, թե բավական հարմարավետ է:

ԳՈՐԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ԲՈՒԺԸ ԱՏՈՐԱԳՐԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՄՆ-Ի ՄՇՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈԶ ԿԱՐԳԱՎԻճԱԿ ԾՆՈՐՉՈՂ ՕՐԵՆՔԸ

ՎԱՃԻՆԳՏՈՆ: ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը դեկտեմբերի 3-ին ստորագրել է Յայաստանին ԱՄՆ-ի հետ մշտական առեւտրական հարաբերությունների կարգավիճակ շնորհող օրենքը որպես ավելի մեծ՝ «Առեւտրական եւ տեխնիկական ծզգրտումների ակտ» կոչվող օրենքի մաս: Այս մասին «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»-ին հայտնում են Ամերիկայի Յայկական համագործարից (ԱՀՅ):

Մշտական առեւտրական գործընկերոջ կարգավիճակը

Վերացնում է Երեսնամյա պատմություն ունեցող վերապահումը՝ Զեքսոն-Վենիկի ուղղումը, որով պահանջվում էր, որպեսզի առեւտրի ցածր սակագների համար Յայաստանը եւ այլ Երկրներ պարբերաբար ստանան ԱՄՆ նախագահի հավանությունը: ԱՅՀ-ը ողջունում է օրենքի ուժի մեջ մտնելը, ընդգծելով, որ այն կրարձրացնի Յայաստանի կարգավիճակը որպես ԱՄՆ-ի հետ առեւտրական գործընկեր եւ կիանգեցնի հայամերիկյան լրացուցիչ առեւտրական համաձայնությունների կնքմանը:

ԱՄՆ նախագահի ստորագրմամբ ավարտվեց օրինագծի ընդունման Երկամյա գործընթացը, որում մեծ դեր են խաղացել հայամետ օրենսդիրները՝ աներիկահայ համայնքի հետ համագործակցաբար: Յոկտեմբերի սկզբին Կոնգրեսի Սերկայացուցիչների պալատն ընդունեց օրինագիծը որպես վերը նշված ավելի մեծ օրենքի մաս, անցյալ ամիս այն հաստատեց նաեւ Սենատը:

ԱՅՀ հաղորդագրությունում շեշտվում է, որ այս օրենքը կնպաստի համաշխարհային տնտեսությանը Յայաստանի տնտեսության ինտեգրացմանը, տարածաշրջանային տնտեսական ինտեգրացմանը եւ Յարավային Կովկասում տնտեսական ածին ու կայունությանը, որ բխում է ԱՄՆ շահերից:

## Միջազգային

### ՎԱՆԱ ԼԻԲԸ ՄԱՐԱՆՈՒՄ Է

ԱՎԿԱՐԱ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Վանա լճի աղտոտվածությունը հասել է 40 տոկոսի եւ մասնագետների գնահատմամբ, նա 25 տարվա կյանք ունի: Մասնագետները հավաստիացնում են, որ այսօրվանից սկսած համապատասխան կանխարգելիչ միջոցառումների դեպքում լճի մաքրությունը վերականգնելու համար կպահանջվի 50 տարի: Այս կապակցությամբ Թուրքիայի հանրային աշխատանքների նախարարությունը հատկացրել է 448 տրիլիոն թուրքական լիրա:

**ԹՈՒՐՔ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ  
ՄԱՍՄՈՒԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ  
ԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱՆՈՒՑԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ  
ԲԱՑՄԱՆԸ**

ՄԱՍՄՈՒԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքիայի վարչապետ Ուջեւի Թայիփ Էրդողանը դեկտեմբերի 5-ին Ստամբուլում

պաշտոնապես հայկական թանգարան է բացել՝ հայտարարելով հայ ազգային փոքրամասնության իրավունքների պաշտպանությանը իր նվիրվածության մասին: Այս մասին հաղորդում է «Ասոշիեյթեդ փրես» գործակալությունը:

Էրդողանը Կ. Պոլսի Յայոց պատրիարք Մեսրոպ արք. Մուրաֆյանի եւ տեղի հայ համայնքի այլ առաջնորդների հետ միասին մասնակցել է Ստամբուլի հայկական Սուլթան Փրկիչ Ազգային հիվանդանոցի թանգարանի բացման արարողությանը: Նորաբաց թանգարանում ցուցադրված են կրոնական իրեր, ինը թժկական սարքավորումներ եւ օսմանյան իրամանագիրը, որով 1832 թ. հիմնվել է հիվանդանոցը:

«Յայ քաղաքացիները Թուրքիայի անբաժանելի մասն են: Այս թանգարանի յուրաքանչյուր ցուցաննուշ ցույց է տալիս անցյալը, որ մենք ապրել ենք միասին», - հայտարարել է թուրք վարչապետը: «Այժմ մենք պաշտպանում ենք մեկմեկու իրավունքները՝ գիտակց մեր քաղաքացիությանը, եւ այսպես կլինի ընդմիշտ», - նշել է Էրդողանը: «Ասոշիեյթեդ փրես»-ը նշում է, որ Թուրքիայի հայերի մեծամասնությունը բնակվում է Ստամբուլում: Թուրքիայի նկատմամբ ներկայումս ճնշում է գործադրվում՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների հետ կապված իրավիճակը բարելավելու պահանջով, որպես Եվրամիության անդամակցության ուղղությամբ գործադրվող ջանքերի մաս: Թուրքիան ակնկալում է, որ ԵՄ առաջնորդները դեկտեմբերի 17-ին համաձայնություն կտան սկսել ԵՄ-ին Երկիր անդամակցության հարցով բանակցությունները: Գործակալությունները նաեւ հիշեցնում են, որ հարաբերությունները հայերի եւ թուրքերի միջեւ լարված են Արածին աշխարհամարտի ընթացքում եւ հետո հայերի զանգվածային կոտորածների պատճառով: Յայկական կողմը պնդում է, որ 1915-1923 թթ. թուրքերի կողմից զանգվածային ջարդերի զոհ են դարձել 1,5 մլն հայեր, եւ պահանջում է, որպեսզի այդ իրադարձությունները որակվեն որպես ցեղասպանություն: Թուրքերը, սակայն, առարկում են ցեղասպանություն բարի օգտագործման դեմ:

### ՄՈՍՈՒԼՈՒՄ ՊԱՅԹԵՑՎԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ԻՐԱՔ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեջաբթի օրվա Երկրորդ կեսին Իրաքի հյուսիսում գտնվող Մոսուլ քաղաքում պայթեցվել են Երկու եկեղեցիներ: Ականատեսների վկայությամբ, անհայտ անձինք գրոհել են քաղդեական եւ հայկական եկեղեցիները, նախապես պայթեցնելով Երկու ռումբ: Զոհերի եւ ավերածությունների մասին առայժմ չի հաղորդվում:

# Հասարակական

ԳԵՐՄԱՆԻԱՅԻՒՄ ՊԱՐՊԱՆՎԱԾ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԲԱՑԱՐԱՅՑՈՒՄ ԵՆ  
ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄՔ ԱՆՑՅԱԼ  
ԴԱՐԱՍԿՉԲԻՆ ԹՈՒՐՖԵՐԻ ԻՐԱԳՈՐԾԱԾ  
ՈՒՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Լուս է տեսել «Հայկական հարցը եւ հայոց ցեղասպանությունը Թուրքիայում 1913-1919թ.» ծավալուն ժողովածուի գերմաներեն հրատարակությունը: Ժողովածուում, որ կազմել է ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը, ներկայացված են Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվում պահպանված փաստաթղթերը: Ինչպես «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»-ի բրեսկցին հայտնեց ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն Գնել Գրիգորյանը, ժողովածուի կարեւորությունը կայանում է նրանում, որ այդ փաստաթղթերը անհերքելի եւ խոսուն փաստեր են, որոնք բացահայտում են Թուրքիայուն անցյալ դարասկզբին հայերի նկատմամբ իրազործված ոճրագործությունը: «Եթե անգիտացիների եւ ֆրանշիացիների արխիվներում եղած փաստաթղթերը թուրքերը կարող են հերքել, ապա 300-ից ավելի գերմանական փաստաթղթերի առակայությունը նրանք չեն կարող հերքել, քանի որ Գերմանիան նրանց դաշնակցն էր», - նշեց Գ. Գրիգորյանը:

Նշենք, որ ժողովածուն մինչ այդ հրատարակվել էր ռուսերեն, իսկ առաջիկայում այն լուս կտեսնի նաեւ հայերեն լեզվով:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ  
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻճԱԿԻ  
ԱՅՆՔԱՆ ԷԼ ԲԱՐՎՈՔ ՉԵ

ԵՐԵՎԱՆ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Վիեննայի Մխիթարյան միաբանությունն ուշադրության կենտրոնում է պահուած գիտությունը: Միաբանությունը դպրոցներ ունի Պոլսում, Փարիզում, Յալեպում, Լուս Անջելեսում: Ինչպես լրագրողներին հայտնեց Վիեննայի միաբանության աքքահայր Պողոս Գոջայանը, իրենց թանգարանում է պահպանվում դրամների ամենաճիշտ հավաքածուն, այդ թվում հայ եւ պարսից թագավորների դրամներ, 2500 ձեռագրեր, թերթերի ժողովածու, Յայատանի Արածին Յանրապետության եռագույն դրոշը, հայերեն առաջին բառարանը եւ այլ պատմաճակության արժեքներ: Ըստ Պ. Գոջայանի, ներկայում Վիեննայի Մխիթարյան միաբանության նյութական վիճակն այնքան էլ լավ չէ: Նախկինում ունեցել են տպարան, սակայն նոր տեխնոլոգիաների ի հայտ գալուց հետո այն փակվել է, եւ այժմ իրենց «Հանդես ամսօրյա» ամսագիրը, որ լուս է տեսնում 1887 թ.-ից, տպագրվում է Երևանում: Աքքահայր խոսքերով, վիեննահայ 3000-ինգանոց հանայնք այնքան էլ կազմակերպված չէ: Իսկ ամենօրյա պատարագներին հիմնականում մասնակցում են տեղացիները:

ԺԱԿ ՇԻՐԱԿԸ ՀԱՄԱՐՈՒՄ Է, ՈՐ  
ԹՈՒՐՖԻԱՆ ՊԵՏՔ Է ԲԱՆԱՀԻ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՓԱՐԻԶ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքիան պետք է ճանաչի հայոց ցեղասպանություն փաստը, իամարուն է ֆրանշիայի նախագահ ժակ Շիրակը: Լրագրողի ճզգոտող հարցին՝ «ցեղասպանություն, թե ողբերգություն», ժ. Շիրակը պատասխանել է «ցեղասպանություն»: Ֆրանշիայում ցեղասպանության փաստը երկրի խորհրդարանում ձայների մեծամասնությամբ ընդունված օրենք է, հիշեցրել է նա: Թեսն ցեղասպանության փաստը նախապայման չէ Թուրքիայի հետ եւ անդամակցության բանակցություններն սկսելու համար, սակայն նախագահի կարծիքով, Թուրքիան պետք է նի անգամ էլ ուսումնասիրի իր անցյալը, որպեսզի իրապես համապատասխանի նվրոպական համայնքի չափանիշներին: Այլապես ֆրանշիան «կշրջափակի բանակցությունները Թուրքիայի եւ ընդունելության առնչությամբ», - ամփոփել է ժակ Շիրակը:

«ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ԴԱՇԻՆՔՆ ԱՅՍՈՐ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԻ»



ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆՆ կարծում է, որ  
ՀԱՅԱՍՏԱՆՆ ՆԱՏՕ-ին անդամակցելու  
անհրաժեշտություն չունի

ԹԱԹՈՒ ՂԱԿՈԲՅԱՆ

Հայատանի պաշտպանության նախարարը երեկ հայտարարեց, որ Յայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները կխորանան եւ կզարգանան այնքան, «քանի դեռ ի հայտ չեն գա հակասություններ Յավաքական անվտանգության պայմանագիր կազմակերպության (ՀԱՊԿ) եւ ՆԱՏՕ-ի շրջանակներում մեր ստանձնած պարտավորությունների միջեւ»:

Հայատանի արտաքին քաղաքականության օրակարգում ՆԱՏՕ-ին անդամակցելու խնդիր եւ անհրաժեշտություն չկա, ինչը չի նշանակում, թե չափությունը կարգացնենք հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ, ասաց Սերժ Սարգսյանը երեկ «Հարավային Կովկաս. Տարածաշրջանային անվտանգության խնդիրներ» կողմանականական ընթացքում, որը կազմակերպել էր

Հասարակական երկխոսության եւ զարգացումների կենտրոնը:

Երեւան-Բյուլուսել հարաբերությունները վերջին մի քանի տարիներին ակնհայտորեն վերելք են ապրում: Սարգսյանը անդրադարձնալով՝ Հայաստան-ՆԱՏՕ հանգործակցության ժավակներին, ասաց, որ 2004 թ. Հայաստանը մասնակցել է դաշինքի 47 միջոցառումներին եւ 5 զորավարժություններին, իսկ 2005 թ. նախատեսվում է հայկական գինութիւն մասնակցությունը՝ 8 զորավարժության եւ 50 միջոցառումների:

Կլոր սեղանին մասնակցում էին Հայաստանի քաղաքական ուժերի առաջնորդներ, ներկայացուցիչներ Երեւանում Ուսուաստանի եւ ԱՄՆ դեսպանություններից: Քննարկման հիմնական բանախոր պաշտպանության նախարարն էր: Սարգսյանն առանձին-առանձին անդրադարձավ՝ Հայաստան-ՆԱՏՕ, Հայաստան-ԱՄՆ, Հայաստան-Ուսուաստան, Հայաստան-Եվրոպի հարաբերություններին, ինչպես նաև անվտանգության տարածաշրջանային համակարգերին:

«Հայ-ռուսական ռազմավարական դաշինքն այսօր այլընտրանք չունի», ասաց պաշտպանության նախարարը, հավելելով, որ հայ-ռուսական հարաբերությունները չեն կարող խոչընդոտ լինել Հայաստանի Եվրոպական ինտեգրացմանը, նաև ավանդ Ուսուաստան-Եվրոպա մերձեցման պայմաններում: Հայ-ռուսական ռազմավարական համագործակցությունն, ասաց Սարգսյանը, անրագրված է շուրջ 6 տասնյակ պայմանագրերով եւ համաձայնագրերով:

Պաշտպանության նախարարը՝ Հայաստան-ԵՄ հարաբերություններին տվեց առանցքային նշանակություն: Հայաստանն այս տարվա հունիսին ընդգրկվել է Եվրոպական քաղաքականության ծրագրում, մեր հանրապետության արտահանման 40 տոկոսը քաֆին է ընկնում ԵՄ Երկրներին: Եվրոպական Երկրների շարքում Սարգսյանն առանձնացրեց Հայաստան-Հունաստան ռազմական «փայլուն համագործակցությունը» կոստվոյում:

Պաշտպանության նախարարը նկատեց, որ անդրկովկայսյան տարածաշրջանում Հայաստանը թերեւս միակ Երկիրն է, որը կարողանում է հավասարակշռված քաղաքականություն վարել, այլ խնդիր է՝ «լավ, թե վատ»: Սարգսյանը կարծում է, որ անդրկովկայսյան Երեք հանրապետությունների միջեւ հնարավոր կլինի հանագործակցություն իրականացնել: Մասնավորապես պաշտպանության նախարարը իիշեց 100-ամյա պատերազմներ վարած Երկրների, ինչպես Անգլիան ու Ֆրանսիան, Գերմանիան ու Ֆրանսիան, որոնք այսօր թշնամիներ չեն:

«Հայաստանի անվտանգության բազմաերաշխիք հանձնակարգի ձեւավորման նպատակով հանրապետության դեկավարությունը շարունակելու է նպատակառության աշխատանք ժավակել տարբեր ուղղություններով», ասաց Սարգսյանը:

ՀՅԴ-ից քննարկման մասնակցության եկած Լեռն Սկրտչյանը Հայաստանի անվտանգության ապահովման առումով պաշտպանության նախարարի նշան ուղղություններին ավելացրեց եւս Երկուսը՝ Իրանը եւ արարական աշխարիքը: Սկրտչյանը մասնավորապես կարեւորեց խալամական հանրապետության հետ մեր հարաբերությունները՝ առանձնապես անցյալին վերաբերող Երկու փաստեր. առաջին՝ փաստորեն Երեք կողմից շրջափակման մեջ գտնվող Հայաստանի կյանքի ճանապարհն Իրանն էր, Երկրորդ՝ դրական չեզորության

միջոցով Թեհրանը թույլ չտվեց, որ դարաբառյան հակամարտությանը տրվի կրոնական Երանգ, ինչին ձգտում էր Ադրբեյջանը:

## Մշակութային

### ԱՌ ԽՈՍՔ ՀԱՅԱՐԱՎԱՐ ԱԱՄՈՒԼՈՒ

2004 թ. օգոստոսին հրատարակվել է «Համշեն» հայրենակցական բարեգործական հասարակական կազմակերպության «Զայն համշենական» ամսաթերթի առաջին համարը, որի խմբագիրը Երկու տասնամյակից ավելի համշենահայության պատմության ու ազգագրության հարցերով զբաղվող Սերգեյ Վարդանյանն է:

Ինչպես գրված է թերթի առաջին համարի խմբագրականում, «Զայն համշենական» աշխարիի չորս ծագերում սփոված համշենահայությանը համախմբող մանուլ պետք է լինի: Այս նախաձեռնությունը, ինչպես բացատրվում է խմբագրականում, տրամաբանորեն բխում է այն իրողությունից, որ հայ գրականության մեջ, անգամ գիտական եւ քաղաքական որոշ շրջանակներուն Համշենի ու համշենահայության մասին պատկերացումները շատ աղոտ են: Տարբեր Երկրներում, տարբեր հեղինակներ հրատարակել են մի շաբաթականում, կազմակերպվում են գիտաժողովներ ու քննարկումներ՝ նվիրված Համշենի պատմությանը, բարբառին, բանահյուսությանը, ազգագրությանը, սակայն դա հասանելի է միայն մասնագետների եւ հետազոտողների նեղ շրջանակի: Այս հանգանաճքը նկատի ունենալով, «Հույն համշենական» թերթը խոստանում է ընթերցողներին ոչ միայն հանգամանորեն տեղեկացնել նշյալ գործընթացների մասին, այլև՝ հրատարակել համշենագիտական արժեքավոր ուսումնասիրություններ, ծանոթացնել Համշենի պատմությանը, մշակույթին, ազգային ավանդույթներին, ծեսերին ու սովորույթներին, բանահյուսությանը, բարբառին, նշանավոր համշենահայերի կյանքին ու գործին՝ լուսաբանելով նաեւ համշենահայ համայնքների ազգային հասարակական կյանքի տարբեր բնագավառների խնդիրները:

Իրոք որ ամսաթերթը ոչ միայն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Համշենի ու համշենահայության պատմական անցյալից, այլև ընդգրկում է հայտնի ու անհայտ դեմքերի ու դեպքերի մասին պատմություններ, որոնք այս կամ այն կերպ կապված են ոչ միայն Համշենի անցյալի, այլև ներկայի կերտման հետ: Որպես ամբողջական ժապավեն, անսարերթն իր համարներում հետաքրքրական կերպով գետեղում է արժեքավոր հրապարակումներ՝ բողնելով այնպիսի տպավորություն, թե ոչինչ չի սպողել

# Հոգևոր Արքայի արքայություն

խմբագրակազմի աշքերից, ոչինչ, որը կարող է հետաքրքրել աշխարհում ապրող յուրաքանչյուր համշենացու:

Չնորանանք նշել, որ ամսաթերթն ունի նաեւ ռուսերեն հավելված, որը կարող է օգտակար լինել ընթերցողների ավելի մեծ զանգվածների համար:

Ինչպես արդեն ասացինք, «Զայն համշենական» թերթի խմբագիրը Սերգեյ Վարդանյանն է, որի գործունեության մասին այս համառոտ տեղեկությունը կիետաքրքրի ընթերցողին՝ օգնելով ավելի ամբողջական կարծիք կազմել ամսաթերթի մասին։ Սերգեյ Վարդանյանն աշխատել է տարբեր խմբագրություններում, ԳԱԱ համգիտության եւ ազգագրության ինստիտուտում, հեղինակել է «Հրեեն ձին», «Հայոց մայրաքաղաքները», «Արեւածաղիկը», «Հայաստանի մայրաքաղաքները», «Թմագավորի երազները» եւ այլ գրքեր, «Համշեն» հայրենակցական բարեգործական ՀԿ-ի փոխնախագահն է։

## ԳՈՐԾԱԳԵՎՈՐՁԱՆ

### ՏՈՐՈՆՏՈՅՈՒՄ ՎԱԽԱՆՎԵԼ Է ՍԱՍԱՐՈՒԻ «ՄԱՐՄԱՐԱ» ՕՐԱԹԵՂԹԻ ՆԱԽԿԻ ԱՐՏՈՆԱՏԵՐ ԵՎ ԽՄԲԱԳՐՄՊԵՏ ՊԵՏՐՈՍ ԶՈՐՅԱՆԸ

ՏՈՐՈՆՏՈ, 14 ԴԵԿԵMBERԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ:  
Դեկտեմբերի 13-ին Տորոնտոյում վախճանվել է Ստամբուլի «Մարմարա» օրաթերթի նախկին արտոնատեր եւ խմբագրապետ Պետրոս Զորյանը: 81-ամյա Պետրոս Զորյանի մահվան պատճառ է հանդիսացել ծանր հիվանդություն։

Ինչպես հաղորդում է «Մարմարա»-ն, մինչ մահը Զորյանը գիրը է հրատարակել, որ «միայն Ուիլյամ Սարոյանի հետ կատարված պտույտի նկարագրականը չէր, այլ նաեւ պատկերազարդ հայոց պատմություն»։

Զորյանը նաեւ լավ ճարտարապետ էր եւ, ինչպես գրում է թերթը, «Ղալարի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին այսօր կրանք նրա անվան եւս մեկ հուշարձանը, ցոլացնելով այս ուղղությամբ Պետրոս Զորյանի՝ որպես ճարտարապետ ցուցաբերած տաղանդը»։ «Բայց ամեն բանից առաջ նա նախընտրել էր մնալ մամուլի անհանդարությունում և նշանակությունում»։ «Եր ամենասիրելի կողակցի՝ Սեղա Շամյան-Զորյանի հետ նա թերթը տարաք դեպի նախանձելի բարձրություններ եւ այս կերպ հավատարին մնաց ոչ միայն իր աներոց նշանավոր լրագրող եւ «Մարմարա»-ի հիմնադիր Սուլեյման Շամյանի հիշատակին, այլև «Մարմարա»-ն դարձեց պոլսահայ համայնքում ծանրություն ունեցող եւ հանրության վստահությունը վայելող թերթ»։

Պետրոս Զորյանի հուղարկավորության արարողությունը կկատարվի դեկտեմբերի 16-ին ժամը 10:30-ին

Տորոնտոյի Ս. Երրորդություն հայկական եկեղեցում։

## ԱԽԱԼՔԱՎԱՔՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է «ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԱՐՊԱՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԸՆՈՐԴԱՆԵՍԸ

ԱԽԱԼՔԱՎԱԸ, 10 ԴԵԿԵMBERԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ:  
Զավախիք տարածաշրջանային «Հարավային դարպաս» շաբաթաթերթի շնորհանդեսն է կայացել դեկտեմբերի 9-ին Ախալքալաքում։

Թերթը լույս է տեսնում IWPR կազմակերպության նախաձեռնությամբ եւ Եվրամիության ու Ֆինլանդիայի կառավարության հովանավորությամբ։ Արդեն լույս է տեսել թերթի 25 համար։

Միջոցառնան մասնակիցները հույս են հայտնել, որ «Հարավային դարպասը» կծառայի Զավախիք տարածաշրջանի բնակչությանը։

Ինչպես հաղորդում է «Ա-Ինֆո» գործակալությունը, թերթը լույս է տեսնում հայերեն եւ վրացերեն տարբերակներով։ Ախալքալաքում գտնվում է հայերեն տարբերակի խմբագրությունը, իսկ Ախալցխայում՝ վրացերեն։

Նախօրեին Ախալցխայում տեղի էր ունեցել թերթի վրացերեն տարբերակի շնորհանդեսը։

## ԿԻՐԱՏԱՐԱԿՎԵՆ ՎԱՐԱՐԵՍԻ ԵՐԿՈՒ ԱՆՏԻՎ ԳՐՅԵՐԸ

### ՀՈՎԼԻԱՆՆԵՍ ԵՐԱՆԵՅԱՆ



«Այս վեպը կավարտվի միայն այն ժամանակ, երբ լուծված կլինի Հայոց հարցը», - ասել է Ավետիք Խահակյանն իր «Ուստա Կարո»՝ մինչ օրս չհրատարակված վեպի մասին։ Այս օրերին, երբ ծշտվում է Հայոց ցեղասպանության 90-ամյակի միջոցառումների ու այդ առիթով հրատարակվելիք գրքերի ցանկը, մենք հանդիպեցինք վարպետի բոռամ՝ Ավիկ Խահակյանի հետ, եւ փորձեցինք ծշտել, թե կա՞ն, առդյոք, աղ ցանկում «Ուստա Կարոն» եւ «Սպիտակ գիրը» նոյնական չհրատարակված ժողովածուն։

- Պատկերացնել հայ գրականությունը եւ Մեծ Եղեռնը առանց Խահակյանի անվան դժվարանում են։ Մեծ քնարերգում եւ հայրենասերը չէր կարող իր ստեղծագործության զգակի մասն այդ հարցին չնվիրել։ Խահակյանը Հայոց հարցին վերաբերող նյութերը սկսել է հավաքել դեռևս 1890 թվականից՝ Սասունի եւ Աղանայի ջարդերից հետո։ Պատահական չէր Խահակյանի կազմը Դաշնակցության հետ, որովհետեւ ստեղծվել էր մի զորեղ կուսակցություն, որը պիտի համախմբեր ազգային անկախության պայքարը։ 20 տարին դեռ չքոլորած Խահակյանը նաև անկախությունը ունեցավ Ալեքսանդրապոլի «Քարի» կոմիտեի ստեղծմանը։ Նա ականատեսը Եղավ Մեծ Եղեռնի եւ ծեռնամուխ Եղավ մի մեծ մեղադրական գործի «Սպիտակ գրքի» ստեղծմանը։ Այստեղ ոչ միայն Ցեղասպանության ականատեսների վկայություններ են, այլև մեր հերոսամարտի, մեր դիմադրության դրվագները Մուսա լեռ, Վանի ինքնապաշտպանություն եւ այլն։ Իսկ «Ուստա Կարոյի» առաջին տարբերակը Խահակյան ավարտել էր դեռևս 1812 թվին, սակայն վրա հասած Համաշխարհային պատերազմն ու հայոց ողբերգությունը չէին կարող իրենց շտկումները չնոտցնել։

# Հույս Կրեմաբանութերք

- Ինչո՞ւ այս գրքերը մինչ օրս չեն հրատարակվել:
- «Ռազմա Կարոն» սովետական տարիներին լրիվ հրատարակելը անհնարին էր: 2000 թ. հրատարակվեցին ավարտված գուլմաները, բայց դա միայն ծանոթություն էր վեպի հետ: Այժմ «Ռազմա Աճառյան» համալսարանի ռեկտոր Ավագ Խաչատրյանի հետ հրատարակության ենք պատրաստում վեպի առաջին տարբերակը: Այս տարի կիրատարակվի նաև «Սպիտակ գիրքը», որը հայ դասականի արձագանքն է մեր պատմության ամենատխուր էջին:
- Պրմ Խահակյան, Դուք գրողների միության նախագահության անդամ եք, եւ ես Ձեզանց եմ ուզում ճշտել մի հարց: Լուրեր են պտտվում, որ միության հրատարակությունը այս տարի պետպատվերով գրքեր լույս չի ընծայելու, որովհետեւ այդ գումարները տրվելու են Ցեղասպանության թանգարանին:
- Ոչ, այս տեղեկությունը ճիշտ չէ: Անշուշտ, ազգովի խոնարիում պիտի լինի Ցեղասպանության 90-ամյակի առթիվ, եւ հրատարակող գրքերի գերակշիռ մասն է պիտի այս թեմային վերաբերեն: Քանի որ նաև Խահակյանի 130-ամյակն է, պետպատվերի շրջանակներում կիրատարակվի նրա մեկ հատորը, կապված հայրենասիրական իդեալի հետ՝ արձակը, օրագիրը, աֆորիզմները:
- Դուք Յայաստանի գրողների միության նախագահության անդամ եք, իսկ Ձեր պապը նախագահ էր: Ինչպիսի՞ն էր Խահակյանը որպես ԳՄ նախագահ:
- Իր համար անսպասելի էր դա: Նախագահ ընտրվեց 1946 թ. եւ միակն էր, որ ընտրվեց ցմահ: Սակայն ամեն նոր տարվան բողոքում էր, ուզում էր հրաժարվել, բայց գալիս էին Երիտասարդները՝ Շիրազը, Յամոն Սահիանը, Սերոն Խանզադյանը, Սեւակը, եւ համոզում, որ ինքը մնա նախագահ: Նրան անհարիր էր պաշտոնյայի ռիտուալը, բայց նա մատնացույց էր անում տաճար տաճող ճանապարհը:
- Կենտկոմի պրոպագանդիստական երկարատեւ աշխատանքը մի գիշերվա մեջ ջուրն էր գցում, հավաքում էր իր տանը երիտասարդ գրողներին ու մի գիշերվա դասը բավական էր, որ մի ողջ սերնդի դներ հայրենասիրական ճիշտ ուղղու վրա: Ծերունազարդ Խահակյանը 1948 թ. մեն մենակ գնաց Ղարաբաղ՝ հավաստելով, թե մենք մի հայրենիք ենք: Եղավ Շուշիում եւ հենց այդ ժամանակ գրեց. «Այստեղ սարսափելի է, ոչինչ չի փոխվել, Աղբեջանի տված ավտոնոմիան ֆիկցիա է: Աղբեջանը կեղծիք է, որը ցնկեցին ինգլիքն ու Խորհրդային Ռուսաստանը ի հակակշիռ Կովկասի իրապես ազատատենչ ազգերի»:
- Պատմությունից գանք այսօրվան: Այսօր էլ կրքեր են բորբոքվում գրողների միության շուրջ: Ոնքանք անդում են, թե արհասարակ չկա ստեղծագործական միությունների անհրաժեշտությունը, մյուսներն էլ հակառակ՝ փորձում են տեր դաշնալ միությունում: Իսկ ամենահետաքրքիրն այն է, որ մամուլը ասես անհամբերությանը է սպասում այդ կրքերի շիկացմանը՝ այն խոշորացույցի տակ առնելու համար: Զեր կարծիքը, ինչպիսի՞ն է գրողների միության դերը այսօրվա մեր հասարակական կյանքում եւ գրական մթնոլորտում:
- Ամենակարեւորն այն է, որ վերջին համագումարից հետո գրողին հետ բերեցինք դեպի գրողների միություն: Սիուրյունը ասես արբանացավ լեբարգիկ քնից եւ սկսեց կարեւոր դեր խաղալ: Ստեղծագործական միությունը չի կարող կողմ կամ դիմադիր լինել իշխանությանը: Սիուրյունը մեր հավերժական իդեալների ու բարոյական չափանիշների կրողն ու պահպանը պիտի լինի:

- Համաձա՞յն եք, որ կա ընթերցանության ճգնաժամ: - Այո, կա: Սակայն ունենք ժամանակակից եւ լավ արձակ, եւ լավ պյեզիա: Բայց ժամանակակից գոռող չի կարող հաշվի չնատել 21-րդ դարի համաշխարհային գրական միտունների հետ: Գրողների միությունը չի կարող իր անդամների փոխարեն գիրք գրել, բայց պարտավոր է ստեղծել այն մթնոլորտը, որում գրական չափանիշներն անկում չեն ապրի: Յամենատելով իրավիճակը տասը տարի առաջվա հետ, երբ անայություն էր, գրքեր չեն հրատարակվում, կարող են վատահ պնդել, թե մենք դրւու ենք եկել այդ ճգնաժամից: Ստեղծվեց հայ գրականության հիմնարարը, որի ֆինանսները ծախսվելու են երկու ուղղությամբ՝ միության հրատարակչությունը եւ հայ գրական մամուլը: Կարգի է բերվում Սեւանի գրողների ստեղծագործական տունը:

Կարեւոր հաղթանակ էր մեր բուժմիավորման շենքի հետ բերելը: Երբ որեւէ տեղ գունար կա, շատերի ախորժակն է բացվում: Իսկ միության նախագահի գործը հեշտերից չէ: Գալիս են ոչ միայն գրողներ, այլև գրաֆոնմաններ, գրողնորոշներ, որոնք պահանջում են իրենց «շեղեւրների» տպագրումը: Գալիս են նաև պարզապես օգնություն ստանալու դիմունով, եւ ոչ միայն գրողները: Բազմաթիվ երկրներում ստեղծվել են մեր միության մասնաճյուղեր, ինչը գրողների միության աճի մասին է վկայում:

- Յամագումարը մայիսին է: Մի փոքր շո՞ւտ չի սկսվել նախընտրական պայքարը:

- Կիմի համագումարը, կամփուկվեն արոյունքները, եւ համոզված են, որ դրանք կիհասթափեցնեն թե դեղին մամուլին ու սենսացիաների սիրահարներին եւ թե՛ շատ հավակնու անձանց:

- Պատմեցիք արածի մասին, իսկ անելիքները որո՞նք են: - Ես չեմ թվարկել այն բոլոր դրական գործերը, որ արվել են վերջին տարիներին, բայց չեմ կարող չնշել միության բոլոր անդամների հնտերնետային սայթերի ստեղծման գործը:

Առաջին անգամ հայ գրողը համաշխարհային ընթերցողի հետ անմիջականորեն առնչվելու, ճանաչելի դառնալու հնարավորություն է ստացել: Անելիքներ, անշուշտ, շատ կան: Ստադիր ենք պայքարել Երեւանում փակված գրախանութերի վերադարձնան համար: Գրոք չպետք է ստորգետնյա անցումների եւ բորյուրների վրա ծախսվող ապրանք լինի:

Այս պիտի վաճառվի գրախանություն, իսկ գրախանութը էլ միայն գիրք վաճառելով չպիտի դառնա մշակութային օջախ, դառնա արվեստի ու գրականության մարդկանց հանդիպման, ծանոթության, շիման վայր: Շատ հարցեր կան, որոնց գրողների միությունը պիտի նորովի նայի: Անպայման պիտի ունենա իր ուսումնական կենտրոնը, որովհետեւ գրում են պատանիները, բայց չգիտեն՝ ում ցույց տան, ում հետ խորհրդակցեն:

«Գրական թերթ» տպագրականը պիտի կրկնապատկվի: Կարեւոր խնդիրներից է ժողովրդի հետ գրողների հանդիպումների ավանդույթի վերականգնումը: Եվ ոչ միայն մայրաքաղաքում, այլև բոլոր մարզերում, Արցախում, Զավախսում: Դա թե ընթերցողին, ժողովրդին է պետք եւ թե՛ հենց գրողին: